

**ԴԱՅԱԵՆԻ-ԴԻԱՈՒՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ
ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ**

ՍԱՐԳՍՅԱՆ Գ. Ն.

Դայաենի-Դիաուիսի պետությունը անխափան կապված է Նաիրի ցեղամիության հետ: Ընդ որում, Նաիրի ցեղամիության մասին առաջին անգամ հիշատակել է Ասորեստանի թագավոր Թուկուլթի-Նինուրթա I-ը (1260-1230) իր թագավորության հենց սկզբին, այսինքն մ.թ.ա. 1260 թ., երբ նա արշավել է 43 երկիր ընդգրկող այդ ցեղամիության մեջ մտնող երկրների վրա¹: Այդ ցեղամիության տարածքը սկսվել է Նաիրի երկրի (կամ Տարոնի) լեռներից ու հասել մինչև Նաիրի երկրի Մեծ ծովը: Նա հաղթում է այդ երկրների թագավորներին, ենթարկում իրեն, «հավերժ ժամանակով» դնում հարկի տակ, ընդունում նրանց երդումը, որ անընդհատ կվճարեն հարկը և առանց պատանդներ վերցնելու հեռանում այնտեղից:

Թուկուլթի-Նինուրթա I-ի թագավորության ժամանակաշրջանում Նաիրի ցեղամիության երկրներից ամեն մեկը հասել էր թագավորության աստիճանի և ուներ իր թագավորը կամ արքայիկը: Այս տեսակետից Նաիրի ցեղամիության երկրները հասել էին հասարակական զարգացման բարձր մակարդակի, ի տարբերություն Հայկական լեռնաշխարհում գտնվող Ուրուատրի ցեղամիության երկրների, որոնք հեռու էին այդ մակարդակից: Իսկ երբ Նաիրի ցեղամիությունը համեմատում ենք Ասորեստանի հետ, որտեղ առաջացել էր կենտրոնական պետություն՝ միանձնյա թագավորի գլխավորությամբ, ապա պարզ է դառնում, որ Նաիրի ցեղամիությունը դեռ ցածր մակարդակի վրա էր: Այնտեղ ցեղային երկրները չէին համակենտրոնացել, որի պատճառով էլ նրա 43 թագավորներն ավելի թույլ էին, քան ասուրական մի թագավորը, որից էլ կրում են դաժան պարտություն ու դառնում նրա հարկատուները:

Թուկուլթի-Նինուրթա I-ից հետո 145 տարի ասուրական արձանագրությունները բոլորովին չեն խոսում Նաիրի ցեղամիության երկրների մասին: Հավանաբար, նրանք վճարել են «հավերժ ժամանակով» իրենց վրա դրված «հարկն ու տուրքը» և ասորեստանցիներին առիթ չեն տվել նոր հարձակումներ գործել իրենց վրա ու խոսել այդ մասին: Իսկ երբ Թիգլաթպալասար I-ը (1115-1077) անցնում է ասուրական արքայական գահին, Հայկական լեռնաշխարհի շատ

¹ Messerschmidt L., Keilschritterxte aus Assur historisch en Inhalts (KAH), Band I Leipzig, 1911, N N 17,66; Schreder O., KAH, II Leipzig, 1922, NN 58, 60; *Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (далее АВИИУ) [Вестник древней истории (далее ВДИ)], М., 1959, N 2, текст, N 3-9*].

երկրներ, այդ թվում՝ Նաիրի ցեղամիության թագավորությունները, դադարում են Ասորեստանին հարկ ու տուրք վճարել: Այդ պատճառով էլ Թիզլաթպալասար I-ը մ.թ.ա. 1115 թ. արշավանքներ է կազմակերպում ապստամբած երկրների, այդ թվում՝ Նաիրի ցեղամիության թագավորությունների վրա, որոնց թիվը հասնում էր 60-ի: Իր տարեգրության մի հատվածում նա հիշատակում է այդ թագավորություններից միայն 23-ի անունները՝ Թումմե, Թունուբե, Թուալի, Կինդարի, Ուզուլա, Ունգամունի, Անդիաբե, Պիլակիինի, Աթուրգինի, Քուլիբարգինի, Շինիբիրինի, Խիմուա, Պաիթերի, Ուիրամ, Շուրուրիա, Աբաենի, Ադաենի, Քիրինի, Ալբայա, Ուզինա, Նագաբիա, Աբարսիունի, Դայաենի²: Ակներն է, որ դրանցից մեկն է եղել Դայաենին, որի անունը փոխանցվել է Ճորոխ գետի ավազանում գտնվող Տայք նահանգի վրա: Մյուս երկրներից Աբաենիի անունը փոխանցվել է Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառին, որը գտնվել է Արածանիի աջ ափին, Ալաշկերտից արևմուտք: Թիզլաթպալասար I-ը հիշատակում է, որ այդ 23 երկրների թագավորներն իրեն դիմավորում են զորքով ու զենքով: Ըստ Թիզլաթպալասար I-ի տված տեղեկությունների, այդ թագավորներից ամեն մեկը ճակատամարտում իր դեմ հանդես է եկել առանձին զորքով (առանց միասնական հրամանատարության): Ասորեստանի թագավորին հաջողվել է հաղթել այդ 23 թագավորների զորքերին, ճակատամարտում սպանել նրանց զինվորներից շատերին, գերեվարել կենդանի մնացած 22000-ին և խլել 120 մարտակառք: Ինչպես այդ 23 երկրների թագավորներին, այնպես էլ նրանց օգնության եկած Նաիրի ցեղամիության մյուս երկրների թագավորներին, որոնց ընդհանուր թիվը, ինչպես նշվեց վերևում, հասնում էր 60-ի, Թիզլաթպալասար I-ը հավաստում է մինչև «Վերին ծովը» կամ Սև ծովը³: Նա ավերում է նրանց «մեծ քաղաքները» (ամրոցները), կողոպտում նրանց ունեցվածքը, հրկիզում նրանց բնակավայրերը, վերածում ավերակների կույտերի, հափշտակում նրանց ձիերը, ջորիները և տավարի անհաշիվ նախիրները, բռնում Նաիրի ցեղամիության բոլոր թագավորներին, ստիպում իր մեծ աստվածների առջև երդվել ապագայի համար, ստրկացնում նրանց, հետո բաց է թողնում, բայց նրանց որդիներին, ի տարբերություն Թուկուլթի-Նինուրթա I-ի, վերցնում է պատանդ, իսկ այդ թագավորների վրա դնում ամենամյա հարկ՝ 1200 ձի, 2000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Ապա Թիզլաթպալասար I-ը անցնում է Եփրատ գետը և մտնում Մելիտեա կամ Մելիդու (Մալաթիա) երկիրը:

Նաիրի ցեղամիության այդ 60 երկրների թագավորներից Թիզլաթպալասար I-ը հիշատակում է միայն Դայաենի երկրի թագավոր Ս(ի)ենիի անունը: Նա եղել է անհնազանդ և չի ցանկացել ենթարկվել ասսուրական հարկային լծին: Այդ անհնազանդության հիմքում, բնականաբար, ընկած է եղել նրա երկրի հզորությունը՝ համեմատած Նաիրի ցեղամիության մյուս երկրների հետ: Թիզլաթպալասար I-ը Ս(ի)ենիին գերում է և տանում Ասորեստան՝ իր Աշշուր մայրաքաղաքը: Ս(ի)ենին ստիպված հնազանդվում է, ենթարկվում Ասորեստանի

² Budge E.A.W. and King L.W., *Annals of the Kings of Assyria (AKA)*, I, London, 1902, N 1 (IV-43, V-22, V-33); *АВШУ*, N 10 (IV-43, V-22, V-33).

³ *АВШУ*, N 10, прим.45.

պահանջներին, ազատ արձակվում, վերադառնում իր երկիրը ու կառավարում որպես Ասորեստանին հարկատու թագավորության արքա՝ պահպանելով իր երկրի պետականությունը⁴:

Նկատի ունենալով Նաիրի ցեղամիության մեջ մտնող մյուս երկրների համեմատությամբ Դայաենիի հզորությունը՝ կարելի է ասել, որ այդ թագավորությունն ունեցել է ավելի վաղ անցյալ և, հավանաբար, գոյություն է ունեցել նաև Թուկուլթի-Նինուրթա I-ի ժամանակ ու համարվել Նաիրի ցեղամիության այն ժամանակվա 43 թագավորություններից մեկը:

Թիզլաթպալասար I –ը Նաիրի երկրները նվաճելու կապակցությամբ սեպագիր արձանագրություն է հաստատում Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի տարածքում, ուր գտնվել է ժամանակակից Յոնջալու բնակավայրը⁵, որի մեջ հիշատակվում է Նաիրի ցեղամիությունը Թումե երկրից մինչև Դայաենի երկիրը նվաճելու մասին: Սա Նաիրի ցեղամիության կոնկրետ տեղադրության առաջին փաստն է:

Փաստորեն, ըստ Թուկուլթի-Նինուրթա I-ի և Թիզլաթպալասար I-ի տեղեկությունների, Նաիրի ցեղամիության տարածքը հյուսիսում հասել մինչև Սև ծով, հարավում՝ Արածանի գետ, արևելքում՝ Ճորոխ գետի ավազան, արևմուտքում՝ վերին Եփրատ (Մալաթիայի դիմաց):

Թիզլաթպալասար I-ի ավերածություններից, կողոպուտից և «դարավոր հարկի ու տուրքի» տակ ընկնելուց հետո Նաիրի ցեղամիության մեջ մտնող թագավորություններից շատերը թողնում են պատմության ասպարեզը: Դրանցից շատ քչերին է հաջողվում մնալ կանգուն: Դրանցից է եղել Դայաենի թագավորությունը: Կանգուն մնացած թագավորություններն առանց ապստամբելու վճարել են Ասորեստանի «դարավոր հարկն ու տուրքը» մինչև մ.թ.ա. IX դ. կեսերը, երբ Ասորեստանի դեմ ապստամբում են նրան հարկատու երկրները, այդ թվում՝ Նաիրի ցեղամիության կանգուն մնացած Թումմե և Դայաենի թագավորությունները: Այդ ժամանակ Ասորեստանի Սալմանասար III (859-824) թագավորն իր կառավարման սկզբից արշավանքներ է սկսում ապստամբած երկրների վրա: Նա արշավում է նաև Թումմե և Դայաենի թագավորությունների վրա:

Եթե Թիզլաթպալասար I-ը և նրա հաջորդները մինչև Սալմանասար III-ը տեղեկություններ չեն թողել Դայաենի և Թումմե երկրների կոնկրետ տեղադրության մասին, ապա Սալմանասար III-ն իր առաջին տարվա արշավանքին վերաբերող տեքստում Դայաենի երկիրը հիշատակում է Վերին Եփրատի և Արածանիի խառնարանի մոտ գտնվող Էնգիտե (Անձիտ) երկրից անմիջապես արևելք տարածված Սուխմու երկրի արևելքում, Արածանիի ավազանում. «Ես, - նշում է նա, - դուրս ելա Էնգիտեից, անցա Արծանիա (Արածանի-Դ.Ս.) գետի վրայով և մոտեցա Սուխմու երկրին. գրավեցի Ուաշտալը՝ նրա

⁴ AKA, N10 (V-22); АВИИУ, N10 (V-22).

⁵ АВИИУ, N 17. прим. 45.

ամրացած քաղաքը, Սուխմուն մինչև նրա սահմանները քանդեցի, ավերեցի, հրկիզեցի կրակով... Դուրս ելա Սուխմուից և ցած իջա Դայաննի երկիրը, նվաճեցի Դայաննին մինչև նրա սահմանները, քանդեցի, ավերեցի և այրեցի կրակով նրա բնակավայրերը, վերցրեցի նրանցից բազմաթիվ գերիներ, ունեցվածք և հարստություն: Դուրս ելա Դայաննիից և մոտեցա Արգաշքուին՝ Արրամու Ուրարտացու արքայական քաղաքին»⁶: Սալմանասար III-ն իր երրորդ տարվա արշավանքի տեքստում դարձյալ Դայաննի երկիրը հիշատակում է Սուխմու երկրից հետո, բայց այստեղ Դայաննիի և Արգաշքուի արանքում հիշատակում է Թումմե երկիրը. «Իմ կառավարության 3-րդ տարում... Սուխմու, Դայաննի, Թումմե երկրները, Արրամու Ուրարտացու Արգաշքու արքայական քաղաքը... նվաճեցի»⁷: Սալմանասար III-ի երրորդ տարվա արշավանքի հետևանքով Թումմե երկիրն անկում է ապրում և դրանից հետո այլևս չի հիշատակվում: Ինչ վերաբերում է Դայաննի երկրին, ապա այն Սալմանասար III-ի երրորդ տարվա արշավանքից հետո դեպի արևելք ընդարձակում է իր տարածքը՝ ներառելով նաև անկում ապրած Թումմե երկրի տարածքը: Ըստ Սալմանասար III-ի 15-րդ տարվա կամ մ.թ.ա. 844 թ. արշավանքի տվյալների, վերելքի ճանապարհ բռնած Դայաննի երկրի տարածքը հասել էր Եփրատի ակունքները, այսինքն՝ մինչև Կարինի ջրաբաշխ լեռները: Այդ արշավանքի ընթացքում Սալմանասար III-ը հասնում է մինչև Եփրատի ակունքները, այսինքն՝ մինչև Կարինի ջրաբաշխ լեռները, այնտեղ հարկ է վերցնում Դայաննի երկրի թագավոր Ասիայից և առաջարկում իր պատկերաքանդակը դնել Ասիայի քաղաքում, այսինքն՝ նրա արքայանիստ քաղաքում. «Իմ կառավարության 15-րդ տարում,- նշում է նա,- ... ես մոտեցա Եփրատի ակունքներին, զոհեր մատուցեցի իմ աստվածներին, Աշշուրի զենքերը լվացի նրա մեջ: Ասիան՝ Դայաննի երկրի թագավորը, գրկեց իմ ոտքերը: Հարկ և սուրբ ստացա ես նրանից, պատրաստեցի իմ արքայական պատկերաքանդակը և դրեցի նրա քաղաքում»⁸:

Ակներն է, որ Սալմանասար III-ը չի հիշատակում Դայաննի երկրի թագավոր Ասիայի արքայանիստ քաղաքի անունը և այն, որ մտել է այդ քաղաքը: Եթե այդ քաղաքը գտնվելիս լիներ Արածանիի ավազանում կամ նրանից հարավ ձգվող տարածքում, ապա Սալմանասար III-ն իր նախորդ արշավանքների ժամանակ կթափանցեր այնտեղ: Հավանական է, որ Ասիայի արքայանիստ քաղաքը գտնվել է Արածանիի ակունքներից դեպի հյուսիս, դեպի Եփրատի ոլորանի ակունքները, ուր տարածված է Բարձր Հայք նահանգի Կարին գավառը՝ իր ջրաբաշխ լեռներով, որտեղ հետագայում Ուրարտուի թագավոր Մենուան հասնում է Դիաուխի երկրի Շաշիլու արքայանիստ քաղաք: Այս փաստը թույլ է տալիս նույնացնել հիշյալ արքայանիստ քաղաքները: Դայաննիի թագավոր

⁶ Schrader E., Keilinschriftliche Bibliothek (KB), I, Berlin, 1889, S. 168 (II-45); *ABHUY*, N27 (II, 45).

⁷ KB, I, S.128. Lin.1-3; *ABHUY*, N28 (35), *crk.1-3*.

⁸ Layard A. H., Inscriptions in the Cuneiform Characters from Assirian Monuments, London, 1851, tabl. 12, 46; *ABHUY*, N31.

Ասիայի արքայական քաղաքի և Դիաուխիի արքայանիստ քաղաք Շաշիլուի նույնության փաստը ոչ միայն մատնանշում է Դայանի ու Դիաուխիի նույնությունը, այլև հաստատում է, որ Դայանի-Դիաուխիի թագավորությունը Ասիայի օրոք ներառել է թե՛ Արածանիի ավազանը և թե՛ Մեծ Հայքի Ծոփաց կողմ նահանգի Էնզիտե-Անձիտ գավառից ընդհուպ Եփրատի ակունքները, մասնավորապես Բարձր Հայք նահանգի Կարին գավառը, և իր շուրջն է համախմբել այդ շրջանի երկրները, որպեսզի դիմագրավեր ասսուրական կործանարար արշավանքներին: Թերևս դա է պատճառը, որ Սալմանասար III-ը հարկ է վերցնում և առանց որևէ մարտի ու արյունահեղության, որը ասսուրական թագավորները սովորաբար կատարում էին ապստամբած և հարկից խուսափող երկրների նկատմամբ, թողնում է Դայանի երկիրն ու հեռանում: Փաստորեն Սալմանասար III-ի թագավորության երրորդ տարվանից, այսինքն՝ մ.թ.ա. 856 թ. հետո Դայանի պետությունը բռնել էր վերելքի ճանապարհը, հզորացել էր, ընդարձակել իր տարածքները դեպի արևելք ու հյուսիս և սարսափ էր տարածել Ասորեստանում: Դայանին դառնում է Նաիրի գեղամիության հզոր ժառանգորդը, որի շուրջն են համախմբվում այդ գեղամիության բնակչության հետնորդներն իրենց տարածքներով:

Ինչպես Դայանիի վերելքն ու հզորացումը, այնպես էլ ուրարտական պետության զորեղացումն ասսուրական թագավորներին ստիպում են՝ սկսած մ.թ.ա. 844 թ., ընդմիջտ հրաժարվել Նաիրի գեղամիության տարածքներից և օրըստօրե հզորացման ճանապարհ բռնած Դայանի երկրից հարկ ձեռք բերելու մտքից: Փաստորեն մ.թ.ա. 844 թ. Դայանին ձեռք է բերում լիակատար անկախություն և ազատություն:

Նաիրի գեղամիության լեզվով մեզ արձանագրություններ չեն հասել: Այդ գեղամիության լեզվի և էթնիկական պատկանելության մասին տեղեկություններ ենք քաղում նրա տեղանունների, գեղատեղանունների, անձնանունների ստուգաբանության միջոցով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ անունները հիմնականում ստուգաբանվում են հայերենի լեզվահիմքով: Այսպես, օրինակ՝ Աբանի (Ապահունիք) տեղանվան հիմքում ընկած են հայերենի «ափ» արմատը և «ենի» ածանցը. այդ արմատով կազմվել են հայոց տեղանուններ (Ափատար, Ափեվանք), Աբարսիունի տեղանվան հիմքում է հայերենի «ապար» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Ապարսիական, Ապարան, Ապար), Դայանի-Դիաուխի տեղանվան կամ գեղատեղանվան հիմքում է հայերենի «դիել» (ծիծ ուտել, մոր կաթը ծծել, սանսկրիտում՝ դայակ, մայր) բառի «դի» կամ «դա» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Դայոցայի վանք, Դիա, Դիակամուրջ, Դիան, Դիասար), Պիլակիի տեղանվան հիմքում ընկած է հայերենի պեղան (գետնի մեջ փորած փոս որևէ կարգի կառույցի համար), պեղել (փոս փորել), պեղածո (փոս փորելով գտած) բառերի «պեղ» արմատը և հայերենի «ակ» ածանցը: Հիշյալ արմատով կազմվել են հայոց տեղանուններ (օրինակ՝ Պեղ), Անդիաբե տեղանվան հիմքում են հայերենի «անդ» և «ափ» արմատները, որոնցով կազմվել են հայոց տեղանուններ (Անդ, Անդ մյուս, Անդյանց, Ափատար,

Ափեվանք), Քուլիբարգինի տեղանվան հիմքում են հայերենի «քուղ» կամ «քըղ» (ուլորուն թել, լեռան խիտ թփուտներով ու խոտերով պատած անանցանելի լանջեր) և «բարձ» կամ «բարձր» արմատները, որոնցով կազմվել են հայոց տեղանուններ (Քղի, Բարձակ, Բարձան), Շինիբիրնի տեղանվան հիմքում են հայերենի «շեն» և «բեր» արմատները, որոնցով կազմվել են հայոց տեղանուններ (Շենավան, Շեն, Շենաթաղ, Ջրաբեր), Պաիթերի տեղանվան հիմքում՝ հայերենի «փայտ» արմատը և հոգնակի թվի «եր» մասնիկը: Հիշյալ արմատով կազմվել են հայոց տեղանուններ (Փայտակերտ, Փայտաձոր, Փայտաշեն, Փայտատեղի), Կինդարի տեղանվան հիմքում ընկած են հայերենի «կինդար» կամ «կեդար» (խոյ) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Կենդերի, Կինդիրանց, Կեդերիչ) և այլն:

Լեզվական այս փաստերը ցույց են տալիս, որ Նաիրի ցեղամիության բնակիչները հիմնականում եղել են հայալեզու ցեղերը, այսինքն՝ արմենները կամ հայերը: Իսկ դա նշանակում է, որ Նաիրին եղել է հայալեզու ցեղերի, այսինքն՝ արմենների կամ հայերի ցեղամիություն: Նկատի ունենալով, որ ցեղամիությունը տեղաբնիկության հատկանիշ է, կարելի է ասել, որ հայալեզու ցեղերը, այսինքն՝ արմենները կամ հայերը տեղաբնիկ են:

Դայաենի պետության լիակատար անկախության տարիները, որոնք սկսվում են մ.թ.ա. 844 թ., հասնում են մինչև Ուրարտուի թագավոր Մենուայի (810-786) քաղաքական ասպարեզ գալը, երբ Ուրարտուն այդ պետության վրա ձեռնարկում է նվաճողական արշավանքներ: Ուրարտական տեքստերում այդ երկիրը կոչվում է Դիաուխի, որը Դայաենի անվան ուրարտերեն հնչյունափոխված ձևն է: Մենուան Դայաենի-Դիաուխին համարում է «հզոր պետություն» (KUR tarae): Այդպիսի բարձր գնահատական ուրարտացիները չեն տվել ուրիշ մի այլ երկրի կամ պետության: Դա նշանակում է, որ իր լիակատար անկախության 34 տարիներին, երբ Դայաենի-Դիաուխին ազատվել է ասուրական հարկային լծից և հակամարտության մեջ չի մտել Ուրարտուի հետ, Դայաենի-Դիաուխի պետությունը խիստ հզորացել է: Նրա կազմում եղել են բազմաթիվ երկրներ կամ մարզեր: Դա է պատճառը, որ հզոր Մենուան մարտով է մտնում այդ պետություն, ուր հանդիպում է համառ դիմադրության:

Դայաենի-Դիաուխի երկրի կամ պետության վրա Մենուայի կատարած արշավանքի մասին արձանագրությունը հայտնաբերվել է Բարձր Հայք նահանգի Կարին քաղաքի շրջանում գտնվող ժամանակակից Յազլիտաշ բնակավայրում. «... Խալդի աստվածը (արշավանքի) ելավ իր գենքով (՝) ընդդեմ Դիաուխիի՝ հզոր երկրի (KUR tar-a-i-u-e-di)... »⁹:

Մենուան Դայաենի-Դիաուխի պետության կազմում հանդիպում է Շեշերի, Բալթուլիսի և Խալդիրիուլիսի երկրներին կամ մարզերին: Պետության արքայանիստ քաղաքն է եղել Շաշիուն¹⁰: Հավանաբար այն գտնվել է արձանագրության գտնվելու

⁹ Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, N 36, стк. 1-2.

¹⁰ УКН, N 36, стк. 3-36.

վայրում, այսինքն՝ Կարին քաղաքի շրջանում, որն, այդ երկրի արքայական քաղաքն է եղել նաև նրա թագավոր Ասիայի ժամանակ: Դայաննի-Դիաուխի մեջ մտնող քաղաքներից Ջուանին համապատասխանում է Կարին քաղաքի շրջանում գտնվող ժամանակակից Ջիվին բնակավայրին: Ինչ վերաբերում է Շեշեթի, Բալթուլխի և Խալդիրիուլխի մարզերի տեղադրությանը, ապա դրանցից Շեշեթին համապատասխանում է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Շավշեթ գավառին, որը տեղադրվում է Ճորոխ գետի Շավշուրի վտակի ավազանում, իսկ Բալթուլխի և Խալդիրիուլխի մարզերը գտնվել են Շաշիլու-Կարինի և Շեշեթի-Շավշեթի միջև ձգվող տարածքում: Այդտեղ է գտնվել նաև Դայաննի-Դիաուխի պետության կազմի մեջ մտնող Ուտուխաի քաղաքը: Նկատի ունենալով, որ Մենուայի նվաճումների հարավային սահմանը եղել է Շաշիլու-Կարինը, իսկ հյուսիսայինը՝ Շեշեթի-Շավշեթը, կարելի է ասել, որ Բալթուլխի և Խալդիրիուլխի մարզերը գտնվել են Շաշիլու-Կարինից դեպի հյուսիս և Շեշեթի-Շավշեթից դեպի հարավ, ուր ձգվել է հետագա Մեծ Հայքի Տայք նահանգը, որտեղ էլ տեղադրվում են հիշյալ մարզերը՝ հյուսիսից դեպի հարավ հերթականությամբ, ուր նման կարգով գտնվել են Տայք նահանգի հետագա Բերդացվոր և Ոքաղե գավառները, որոնցից առաջինում հավանաբար տեղադրվում է Բալթուլխին, իսկ երկրորդում՝ Խալդիրիուլխին: Նշված երեք մարզերի տեղադրությունը ցույց է տալիս, որ Մենուան արշավանք է գործել ոչ միայն Դայաննի-Դիաուխի պետության կենտրոնի, այլև նրա հյուսիսային կողմում գտնվող երեք մարզերի վրա:

Մենուան հզոր Դայաննի-Դիաուխի պետության նկատմամբ իր կատարած ռազմական գործողությունների կապակցությամբ արձանագրություն է հաստատում նաև Ջուաննի-Ջիվին քաղաքում, որտեղ հպարտությամբ պատմում է այդ պետության Շաշիլու արքայանիստ քաղաքը գրավելու մասին ¹¹: Սակայն իրականում Մենուան այնտեղ փախած իր նախկին գերիներից, ինչպես նաև երկրից միանվագ հարկ վերցնելուց և որոշ ավերածություններ կատարելուց բացի ուրիշ հաջողության չի հասել, քանի որ Դայաննի-Դիաուխի արքայական գահն ու այդ երկրի կազմի մեջ մտնող մարզերը մնում են կանգուն:

Մենուային հաջորդող Արգիշտի I-ը (786-764) իր թագավորության երկրորդ տարում, այսինքն՝ մ.թ.ա. 785 թ. արշավում է Դայաննի-Դիաուխի պետության վրա: Թեև Մենուայի համեմատությամբ Արգիշտի I-ին հաջողվում է ավելի խորանալ Դայաննի-Դիաուխի պետության սահմաններից ներս, նրան նույնպես չի հաջողվում նվաճել ամբողջ երկիրը: «Խորխորյան տարեգրությունում» Արգիշտի I-ը, պատմելով իր երկրորդ տարվա կատարած արշավանքի մասին, նախապես տեքստի սկզբում Դայաննի-Դիաուխի պետության անունը ներկայացնում է որպես ընդհանուր հասկացություն, որի տակ հիշատակում է այն երկրները կամ մարզերը, որոնք մտել են այդ պետության կազմի մեջ ¹²:

Տեքստի տվյալներից հասկանալի է, որ Դայաննի-Դիաուխի պետության կազմի մեջ մտել են Շերիագի, Բիանի, Խուշանի, Թարիունի, Չաբախա,

¹¹ Նույն տեղում, N 37:

¹² Նույն տեղում, N 127:

Միրիմուֆարա, Իզանի, Էրիախի, Ապունի, Ուիտերուիսի երկրները և Մակալթունի քաղաքի մարզը:

Ինչ վերաբերում է Աբիլիանեխի, Անիշթիրգաե, Կուարգանի և Ուլթուգա երկրներին, ապա ենթատեքստում թեև դրանք կտրված են անմիջապես Դայաենի-Դիաուիսի պետության կազմ մտնող երկրների կամ մարզերի շարքից, բայց տեքստի ընդհանուր մտքից հասկացվում է, որ հավանաբար, դրանք քաղաքական առումով կապված են Դայաենի-Դիաուիսի պետության հետ:

Տեքստում հիշատակված Թարիունի երկիրը համապատասխանում է հետագա Մեծ Հայքի Գուգարք նահանգի Թռեղք գավառին (Կուր գետի արևմտյան ափին), որի Հանաք բնակավայրից հայտնաբերվել է Արգիշթի I-ի արձանագրություններից մեկը՝ նվիրված Թարիունի երկրի նվաճմանը¹³: Իզանի երկիրը և Մակալթունի քաղաքի մարզը տեղադրվում են այժմյան Դաշ-կերպի բնակավայրի շուրջ (Չալդիր լճի մոտ, հետագա Մեծ Հայքի Այրարատ նահանգի Աշոցք գավառի տարածքում), որտեղից հայտնաբերված Սարդուրի II-ի արձանագրության մեջ խոսվում է Մակալթունի քաղաքի գրավման մասին¹⁴: Թարիունի-Թռեղքի և Մակալթունի-Դաշ-կերպիի արանքում հիշատակված Ջաբախա երկիրը, Ուզինաբիթարնա քաղաքը և Միրիմուֆարա երկիրը տեղադրվում են հենց նրանց արանքում ընկած այդ տարածքում: Դա հաստատվում է Գուգարք նահանգի այդ տարածքում գտնվող Ջավախք գավառի և հիշյալ Ջաբախա երկրի համադրությամբ: Հավանաբար, Միրիմուֆարան տեղադրվում է Ջաբախա-Ջավախքից և Իզանի-Աշոցքից արևելք գտնվող հետագա Տաշիր գավառում (Գուգարք նահանգ): Մակալթունի-Դաշ-կերպիին դեպի հարավ հաջորդող Էրիախի երկիրը տեղադրվում է Այրարատ նահանգի Շիրակ գավառում՝ ըստ ժամանակակից Մարմաշեն (Գանլիջա) բնակավայրից հայտնաբերված Արգիշտի I-ի արձանագրության, որը պատմում է Էրիախի երկրի, նրա մոտ գտնվող Իշկիգուլու երկրի և Իրդանիունի (հմմտ. Արտահան) քաղաքի նվաճման մասին¹⁵: Ուիտերուիսի երկիրը տեղադրվում է Այրարատ նահանգի Բագրևանդ (Ալաշկերտ) գավառի Վաղարշակերտ (այժմ՝ Թոփրախ-կալե) ամրոցի շրջակայքում, որտեղից հայտնաբերված Իշպուինիի արձանագրության մեջ խոսվում է Ուիտերուիսի երկրի Անաշե (հմմտ. Ալաշկերտ) քաղաքի, Լուշա և Քաթարգա երկրների գրավման մասին¹⁶ (վերջիններս նույնպես գտնվել են Դայաենի-Դիաուիսիի տարածքում): Ուիտերուիսի - Վաղարշակերտ - Թոփրախ-կալեի առնչությամբ հիշատակվող Ապունի երկիրը (հմմտ. ասսուրական արձանագրությունների վերոհիշյալ Աբաենի երկիր) տեղադրվում է այդ երկրի հարևանությամբ և, հավանաբար, համապատասխանում է Տուրուբերան նահանգի այդ տարածքում գտնվող Ապահունիք գավառին: Ինչ վերաբերում է Թարիունի-Թռեղք

¹³ Ali M. Dincol, Die Urartasche Inschrift aus Hanak (Kars), "Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp", Ankara, 1992, S. 110.

¹⁴ YKH, 159.

¹⁵ Նույն տեղում, N 133:

¹⁶ Նույն տեղում, N 23:

երկրից առաջ Բիանի երկրի, Խուշանի երկրի, Շերիազի երկրի և Պուլթե քաղաքի տեղադրությանը, ապա նրանք ենթատեքստում հիշատակվել են Թարիունի-Թռեղք երկրից վերև, այսինքն՝ տվյալ դեպքում նրանից հյուսիս, դեպի Սև ծովի հարավային կողմը ձգվող տարածքում: Այդ տարածքում հիշյալ երկրներից Խուշանիի տեղադրումը հաստատվում է նրանով, որ Սարդուրի II-ը Սև ծովի հարավ-արևելյան ափին գտնվող Կուլխա (Կուլսիդա) երկրից վերադառնալիս ամենից առաջ մտել է նրա սահմանի մոտ գտնվող Խուշալխի (Խուշանի) երկիրը¹⁷: Սա նշանակում է, որ Խուշալխի (Խուշանի) երկիրը գտնվել է Կուլխա-Կուլսիդա երկրի և Թարիունի-Թռեղքի արանքում: Այդ տարածքից հյուսիս, դեպի Սև ծովի հարավային ափերը գտնվել են Բիանի երկիրը, Պուլթե քաղաքը և Շերիազի երկիրը: Այս տարածքում Պուլթե քաղաքը տեղադրելիս իր վրա ուշադրություն է հրավիրում Սև ծովի հարավային ափին գտնվող Բաթում քաղաքը: Ենթատեքստում Պուլթե-Բաթումը հիշատակվում է այնպես, որ կարծես այն գտնվել է Շերիազի երկրում: Ուրեմն, Պուլթե-Բաթումի շրջակայքում է գտնվել Շերիազի երկիրը: Ըստ ենթատեքստի, Շերիազի երկրի, Պուլթե-Բաթում քաղաքի և Խուշալխի (Խուշանի) երկրի արանքում է գտնվել Բիանի երկիրը:

Նշված տեղադրումները ցույց են տալիս, որ Արգիշտի I-ը իր թագավորության երկրորդ տարում արշավել է Դայանի-Դիաուխի պետության հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան սահմաններում գտնվող մարզերի վրա:

Ինչ վերաբերում է Աբիլխանեխի, Անիշթիրգանե, Կուարգանի և Ուլթուգա երկրների կամ մարզերի տեղադրությանը, ապա պետք է նկատի ունենալ, որ նրանցից Աբիլխանեխին համապատասխանում է Այրարատ նահանգի Աբեղեանք գավառին, որը գտնվել է վերին Արաքսի ավազանում: Մյուս երեք երկրները կամ մարզերը տեղադրվում են անմիջապես նրա շրջակայքում՝ հարավ-արևելքից դեպի արևմուտք ձգվող հերթականությամբ, ուր գտնվել են Այրարատ նահանգի Գաբեղյանք, Հավնունիք և Բասեն գավառները, որոնցից առաջինի տարածքում է գտնվել Անիշթիրգանե, երկրորդի տարածքում՝ Կուարգանի, իսկ երրորդի տարածքում՝ Ուլթուգա մարզը:

Փաստերը ցույց են տալիս, որ Արգիշտի I-ը իր այս արշավանքի ժամանակ միայն ասպատակել ու կողոպտել է Դայանի-Դիաուխի երկիրը: Նա նույնիսկ չի հանդիպել երկրի թագավորին իր կռիվների ընթացքում: Արգիշտի I-ի այդ արշավանքից հետո Դայանի-Դիաուխի պետությունը շարունակում է Ուրարտուից մնալ անկախ և պահպանել իր պետականությունն ու արքայական գահը:

Վանի Սուրբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված արձանագրության իրար հետ կապված «A1» և «B1» հատվածներում¹⁸ Արգիշտի I-ը պատմում է իր թագավորության 19-րդ տարում կամ մ.թ.ա. 767 թ. Դայանի-Դիաուխի պետության վրա կատարած նոր արշավանքի մասին: Արձանագրության տվյալներից հասկացվում է, որ Դայանի-Դիաուխի պետությունը պայքարի է ելել Ուրարտուի

¹⁷ Նույն տեղում, N 155, c, cтк. 1-5:

¹⁸ Նույն տեղում, N 128 A и B, A1, B1:

դեմ: Նրա նպատակն է եղել հրաժարվել Ուրարտուի գերիշխանությունից: Պայքարը ղեկավարել է երկրի թագավոր Ուտուփուրշինին՝ Աբնուլուանիի հետ, որը, հավանաբար, եղել է երկրի արքայազնը և ունեցել է իրեն ենթարկվող երկիրը կամ մարզը: Արգիշտի I-ը ստիպված գորք է հավաքում և արշավում Դայանի-Դիաուխի պետության վրա: Երկրի արքա Ուտուփուրշինին և արքայազն Աբնուլուանին նրան դիմավորում են իրենց գորքով: Արգիշտի I-ին հաջողվում է ճակատամարտում հաղթել և նախորդ արշավանքի համեմատությամբ ավելի խոր թափանցել երկրի սահմաններից ներս, հասնել նրա այն մարզերը, ուր չէր հասել ինչպես Մենուան, այնպես էլ ինքը իր նախորդ արշավանքի ժամանակ:

Արգիշտի I-ը «Խորխորյան տարեգրության» վերոհիշյալ հատվածի նման Վանի Սուրբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված արձանագրության իրար հետ անխզելիորեն կապված «A1» և «B1» հատվածներից առաջինում դարձյալ Դայանի-Դիաուխին ներկայացնում է որպես ընդհանուր հասկացություն, որի տակ հիշատակում է այն երկրների կամ մարզերի նվաճումը, որոնք մտել են Դայանի-Դիաուխի պետության կազմի մեջ¹⁹:

Տեքստի տվյալներից հասկանալի է, որ Դայանի-Դիաուխի պետության կազմի մեջ մտել են Բիա(նի), Խուշանի, Դիդինի, Աշկալաշի, Կադա երկրները, Շաշիլու քաղաքի մարզը, Շաշքի երկիրը, Արդարաքիլի երկիրը, Բալթուլի ցեղի, Կաբիլուի ցեղի երկրները, Իգանի, Էրիախի, Ապունի, Ուիտերուի, Գուլաթախի, Քաթարգա, Լուշա երկրները: Այս երկրներից կամ մարզերից Բիանին, Խուշանին, Բալթուլին Մենուան և Արգիշտի I-ը հիշատակել են վաղուց, իսկ մյուս երկրները բոլորովին նոր են հիշատակվում:

Ըստ Արգիշտի I-ի 19-րդ տարվա արշավանքի տեքստի տվյալների, Դայանի-Դիաուխի պետության կազմում տեղ են գտել այնպիսի երկրներ, որոնք չեն հիշատակվել նրա երկրորդ տարվա արշավանքի տեքստում: Դրանք, փաստորեն, նոր են Դայանի-Դիաուխիից նվաճվել ուրարտական պետության կողմից: Այդ երկրներից մեկը՝ Դիդին, հիշատակվում է Բիանի և Խուշանի մարզերի և Ջուանի (Ջիվին) նոր արքայական քաղաքի արանքում ձգվող տարածքի հետ կապված: Արգիշտի I-ի թագավորության երկրորդ տարվա արշավանքի տեքստից իմացանք, որ Բիանի և Խուշանի երկրները գտնվել են Դայանի-Դիաուխի պետության հյուսիսում: Արգիշտի I-ը տեքստում սկսում է այդ երկրների կողմից թվարկել իր նվաճումները և շարժվել հարավ-արևմուտք՝ հիշատակելով Բարձր Հայք նահանգի Կարին գավառի մոտ գտնվող Ջուանի (Ջիվին) քաղաքի անունը: Բնականաբար Բիա(նի) ու Խուշանի մարզերի և Ջուանի (Ջիվին) քաղաքի արանքում ձգվող ընդարձակ տարածքի որևէ մի հատվածում է գտնվել Դիդինի մարզը, իհարկե, ինչպես ընդգծվել է ենթատեքստում, Ջուանի-Ջիվինին մոտ վայրում, ուր գտնվել է հետագա Բարձր Հայք նահանգի Շադագում գավառը:

Նոր գրաված հաջորդ երկրներից են Աշկալաշին և Կադան, որոնք հիշատակվում են Ջուանի-Ջիվին քաղաքի և Բարձր Հայքի Կարին գավառի շուրջը տարածված Շաշիլու-Յազլիտաշ մարզի միջև ձգվող տարածքում: Անշուշտ, այդ

¹⁹ Նույն տեղում, N 128, Ը1, Թ1:

տարածքին մոտիկ վայրում, բնականաբար, Բարձր Հայքի հյուսիսային Սպեր և Դերջան գավառներում են տեղադրվում համապատասխանաբար Աշկալաշի և Կադա երկրները: Նոր են նաև Շաշիլու-Յազլիտաշ մարզից հետո հիշատակված Շաշքի, Արդարաքիխի, Կաբիլուխի երկրները, որոնք ըստ ենթատեքստի, տեղադրվում են Շաշիլու-Յազլիտաշ մարզից արևմուտք ձգվող տարածքում և համապատասխանաբար տեղադրվում են Բարձր Հայք նահանգի հյուսիս-արևմտյան և արևմտյան Եկեղյաց, Դարանաղի և Աղիվն գավառներում (Ծովքին մոտիկ, Վերին Եփրատից արևելք):

Նոր գրաված հաջորդ երկրներից են Գուլութախին, Քաթարգան և Լուշան, որոնք տարածվել են Էրիխի-Շիրակի ու Ուխտերուխի-Բագրավանդի միջև և տեղադրվում են հետագա Այրարատ նահանգի այդ տարածքում գտնվող Արշարունիք, Ճակատք և Ծաղկոտն գավառների տարածքում, որոնցից Գուլութախին տեղադրվում է դրանցից առաջինի, Քաթարգան՝ երկրորդի, իսկ Լուշան՝ երրորդի գրաված տարածքում:

Մատնանշված տեղադրումները ցույց են տալիս, որ Արգիշտի I-ը իր թագավորության 19-րդ տարում կամ մ.թ.ա. 767 թ. հիմնականում արշավել է Դայաենի-Դիաուխի պետության հյուսիսային մասում գտնվող մարզերի վրա: Ակնհերև է, որ նա ավարտել է այդ կողմերում Դայաենի-Դիաուխի պետության վրա Մենուայի կիսատ թողած արշավանքը և նվաճել է ամբողջ հյուսիսային կողմի մարզերը: Նա նվաճում է նաև երկրի հարավային այն մարզերը, որոնք պայքարի էին ելել իր դեմ:

Մատնանշված փաստերը ցույց են տալիս, որ Դայաենի-Դիաուխի պետության տարածքը գտնվել է Յոնջալու Աբաենի-Ապունի, Ապահունիքի, Յազլիտաշ-Շաշիլուի, Զիվին-Չուանիի, Թռեղք-Թարիունիի, Դաշ-կերպի-Մակալթունիի, Մարմաշեն-Գանլիջա-Էրիխիի, Վաղարշակերտ (Թոփրախկալե)-Ուխտերուխի-Ալաշկերտի արձանագրությունների գրաված տարածքների օղակի մեջ և նրանց շրջակայքում: Փաստորեն Դայաենի-Դիաուխի պետության տարածքը ձգվել է Կուր գետից մինչև Վերին Եփրատ և Արածանիից ու Վերին Արաքսից մինչև Սև ծով, ինչը գրեթե համընկնում է Նաիրի ցեղամիության գրաված տարածքին: Հետագայում այս ընդարձակ տարածքում ձևավորվել են Մեծ Հայքի ինչպես Տայք, Գուգարք, Բարձր Հայք նահանգներն ամբողջովին, այնպես էլ Այրարատ նահանգի Բասենից մինչև Շիրակ ընկած և Աշոցք գավառները, Տուրուբերան նահանգի Ապահունիք, Տուարածատափ (հմմտ. սեպագիր Տուարածինի-խուբի) ու Տարոն գավառները և Ծովաց կողմ նահանգի Բալախովիտ ու Էնզիտե-Անձիտ գավառները: Մի տարածք, որը կազմել է շուրջ 150.000 քառ.կմ:

Դայաենի-Դիաուխի պետության հետ կապված հիշատակվել են շուրջ 31 մարզեր կամ երկրներ, իսկ նրա կազմի մեջ անմիջապես մտել են շուրջ 27 մարզեր²⁰, ավելի քան 105 ամրոցներ և 453 քաղաքներ:

²⁰ Տասը մարզեր կամ երկրներ էլ սերտ դաշինքի մեջ են մտել նրա հետ, հավանաբար, այդ երկրներից ոմանք անմիջապես մտել են նրա կազմի մեջ:

Դայաենի-Դիաուխի պետությունն ունեցել է տասը հազարից ավելի զինվոր: Ջինվորների այդպիսի քանակությունն այդ ժամանակ մեծ ուժ էր: Իսկ եթե դրան ավելացնենք այն փաստը, որ, ինչպես տեղեկացնում է Արգիշտի I-ը իր 19-րդ տարվա արշավանքի տեքստում, զորք են ունեցել նաև Դայաենի-Դիաուխի պետության մեջ մտնող երկրները կամ մարզերը ²¹, ապա այդ պետության հզոր զինական ուժի մասին մեր ենթադրությունը ավելի է հիմնավորվում:

Դայաենի-Դիաուխի պետությունն ունեցել է զարգացած տնտեսություն, որի գլխավոր ճյուղերից են եղել մետաղամշակությունը (ոսկու, արծաթի, պղնձի ձուլումը), անասնապահությունը (խոշոր ու մանր եղջերավոր անասունների բուծումը) և ձիաբուծությունը:

Թեև Դայաենի-Դիաուխին նվաճվում է Ուրարտուի կողմից ու դառնում նրան հարկատու երկիր, բայց Արգիշտի I-ի և Ուտուփուրշինիի միջև մ.թ.ա. 767 թ. կնքված սեպագիր պայմանագրով պահպանվում է այդ երկրի թագավորությունը: Ուրարտուի գերիշխանության տակ: Այն գոյատևել է մինչև մ.թ.ա. 522 թ., երբ Ուրարտուի հետ Դայաենի-Դիաուխին էլ Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ի (մ.թ.ա. 522-485թթ.) կողմից զրկվում է իր թագավորությունից ու վերածվում պարսկական սատրապության:

Դայաենի-Դիաուխի պետության բնակչության էթնիկական պատկանելության որոշման հարցում կարևոր տեղ ունեն ինչպես այդ պետության տեղանունների, ցեղատեղանունների և անձնանունների ստուգաբանության արդյունքները, այնպես էլ նրա հետ կապված հիերոգլիֆիկ արձանագրությունների սվյալները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Դայաենի-Դիաուխի պետության այդպիսի անունները ստուգաբանվում են հայերենի լեզվահիմքով, ինչպես Նաիրի ցեղամիությանը: Այսպես, օրինակ՝ Ջուանի տեղանվան հիմքում ընկած է հայերենի «զով» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Ջովաբեր, Ջովաշեն, Ջովունի), Ուրիեիունի տեղանվան հիմքում՝ հայերենի «ուռ» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Ուռ, Ուռասար, Ուռեկ), Արդարաքիի տեղանվան հիմքում՝ հայերենի «արդար» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Արդարաց, Արդար Դավիթ, Արդարագ), Կաբիլուխի տեղանվան հիմքում՝ հայերենի «կապ(ել)» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Կապան, Կապս, Կապանոն), Թարիունի տեղանվան հիմքում՝ հայերենի «թառ» (բարձր տեղ) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Թառ, Թառթումբ, Թառակատար), Դիդիի տեղանվան հիմքում՝ հայերենի «դիտ(ող)» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Դիդիվանք, Դիդավան, Դիտակ), Իրդանիունի (Արտահան) տեղանվան հիմքում՝ հայերենի «արտ» (դուրս) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Արտա, Արտաբերդ, Արտագես), Մակալթունի տեղանվան հիմքում՝ հայերենի «մակաղ» և «տուն» արմատները²²,

²¹ УКН, А и В, В1, стр. 27-40.

²² **Ջահուկյան Գ.Բ.**, Ուրարտու-Հայաստան, Ե., 1988, էջ 156):

որոնցով կազմվել են հայոց տեղանուններ (Մակադոց, Տունգալ, Տունգալիքոյ), Սենի անձնանվան հիմքում՝ հայերենի «սեն» (մետաղի տեսակ՝ կապար) արմատը, Ասիա անձնանվան հիմքում՝ հայերենի «աս» (ասող, բանական) արմատը, Ուտուփուրշինի անձնանվան հիմքում՝ հայերենի «ուր», «փոր» (ձորագավառ) և «շին(ոդ)» (կառուցող) արմատները, Աբնուլուանի անձնանվան հիմքում՝ հայերենի «ապ» (պապ) արմատը, Դիուծինի անձնանվան հիմքում՝ հայերենի «դի(ք)» (աստված, կուռք) և «ծին» (ծնունդ) արմատները, Կապուրինի անձնանվան հիմքում՝ հայերենի «կապար» (մետաղի տեսակ՝ արձիճ) արմատը, Մուրինի անձնանվան հիմքում՝ հայերենի «մոր» (մոռ, մորենու պտուղ) արմատը:

Լեզվական այս փաստերը ցույց են տալիս, որ Դայաենի-Դիաուլիի պետության բնակիչները հիմնականում եղել են հայալեզու ցեղերը, այսինքն՝ արմենները կամ հայերը²³, ինչպես Նաիրի ցեղամիության բնակիչներն էին: Իսկ դա նշանակում է, որ Դայաենի-Դիաուլիին եղել է հայկական ցեղերի պետություն, այսինքն՝ արմենների կամ հայերի պետություն:

Դայաենի-Դիաուլիի բնակչության էթնիկական պատկանելության կամ նրա լեզվի մասին տեղեկություններ են պահպանել ինչպես հույն աշխարհագիր Ստրաբոնի (մ.թ.ա. I դար) «Աշխարհագրությունը», այնպես էլ այդ պետության տարածքից հայտնաբերված հիերոգլիֆիկ արձանագրությունները: Ընդ որում, Ստրաբոնի աշխատության մեջ տեղեկություն է պահպանվել, որ Բարձր Հայք նահանգի Սպեր (Մու(ս)պիրիտիս) գավառից բացի Եկեղյաց գավառի բնակիչներն էլ եղել են արմենները կամ հայերը դեռևս մ.թ.ա. XIII դարում, երբ ձևավորվում էր Արգոնավորդների առասպելը²⁴: Այս փաստը ակներևաբար խոսում է Դայաենի-Դիաուլիի պետության մասը կազմող Բարձր Հայք նահանգի, մասնավորապես նրա Եկեղյաց գավառի բնակչության հայկական ծագման մասին:

Դայաենի-Դիաուլիի պետության տարածքում գտնվող Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառի Երիզա (Երզնկա) քաղաքի մոտ տարածված Ոսկե-բլուրի կամ Ալթին-թեփեի պեղումների ընթացքում հայտնաբերվել են խեցանոթներ, բրոնզե անոթներ և բրոնզե երեսկալներ, որոնց վրա կան վանկագիր հիերոգլիֆիկ գրերով մեկ տասնյակի հասնող արձանագրություններ²⁵: Արձանագրությունները հիմնականում վերաբերում են անոթների տարողությանը: Այդ նպատակի համար արձանագրություններում օգտագործվել են ուրարտերենի տարողության չափերը ցույց տվող a-qar-qi «ա-կար-կի» և ti-ru-si «տի-րու-սի» տերմինները: Բայց այդ տերմինները չեն գրվել այնպիսի ուղղագրությամբ, ինչպես դրանք գրվել են ուրարտական սեպագիր արձանագրություններում է: Այդ տերմիններից առաջինը

²³ *Մարգարյան Դ. Ն.*, Ուրարտացիներ, ալարոդներ, արմեններ հարցի մասին (ՊԲՀ, 1991, N1, էջ 201-202):

²⁴ *Strabonis*, Geographica, recogn. A. Meineke, vol. I-III, Lipsiae, 1915-1925, lib. XI (4).

²⁵ *Klein J.J.* Urartian hieroglyphic inscription from Altintepe (Anatolian Studies, 24, London, 1974, ersch. 1975) p. 77. *Клейн Джеффри Дж.*, Урартские иероглифические надписи из Алтынтепе (Древний Восток, III, E., 1976, с. 127-149).

գրվել է a-ha+r-ku «ա-խա+ր-քու», իսկ երկրորդը tu-ru-za «թու-րու-զա» ձևով, որոնց ուղղագրությունը, ակներևաբար, տարբերվել է այդ տերմինների գրության ուրարտական ուղղագրությունից: Ուշագրավ է նաև այն փաստը, որ ուրարտացիները երբեք նշված հիերոգլիֆիկ գրերով արձանագրություններ չեն գրել: Ուրարտերենին անսովոր ուղղագրությունը և ուրարտացիներին անսովոր գրությունը թույլ են տալիս մտածելու, որ եթե այդ արձանագրությունների գրողները լինեին ուրարտացիները, ապա նրանք հիշյալ տերմինները կգրեին այնպիսի ուղղագրությամբ, ինչպես դրանք գրվել են ուրարտերեն սեպագրերով: Ասվածը թույլ է տալիս մտածելու, որ այդ արձանագրությունների հեղինակները ոչ թե ուրարտացիներ են, այլ ուրիշ ցեղեր: Եթե այդ արձանագրությունների հեղինակները խեթա-լուվիական ցեղեր լինեին, ապա հիշյալ ամանների տարողության չափերը կգրեին իրենց լեզվում եղած համապատասխան տերմիններով: Բայց այդպես չէ: Ամենայն հավանականությամբ, Դայաենի-Դիաուխի պետության տարածքից հայտնաբերված այդ արձանագրությունները գրել են Դայաենի-Դիաուխի պետության բնակիչները, այսինքն՝ արմենները կամ հայերը: Նրանք, փաստորեն, օգտագործել են ուրարտերեն լեզվով տերմինները, բայց հեռացել են ուրարտերեն լեզվից՝ նրա ուղղագրությունից և այդ տերմինները գրել են այլ լեզվով: Հավանական է, որ այդ լեզուն եղել է Դայաենի-Դիաուխի պետության բնակիչների, այսինքն՝ արմենների կամ հայերի լեզուն:

Հավանաբար, Դայաենի-Դիաուխի պետության բնակիչները, այն է՝ արմենները կամ հայերը, մոտ ապրելով խեթա-լուվիական ցեղերին, նրանցից ընդօրինակել են հիերոգլիֆիկ գրությունը՝ վերոհիշյալ արձանագրությունները գրելու համար:

Ուշագրավ է Ոսկե-բլուրից կամ Ալթին-թեփեից հայտնաբերված հիերոգլիֆիկ արձանագրություններից 9-րդը, որը ներկայացվել է Ջ. Քլեյնի հիշյալ աշխատությունում, ուր գրիչը շեղվել է անոթների տարողությունը ցույց տվող գրության միօրինակությունից և նրանում turuza տերմինից բացի օգտագործել է s(a)-a-wi և E.GAL սովորական բառերը. «s(a)-a-wi E.GAL 2 TU»: Այս արձանագրության մեջ հիշատակված TU բառը taruza բառի կրճատ ձևն է, 2-ը ցույց է տալիս տարողության չափի աստիճանը, E.GAL-ը շումերական գաղափարագիր է, որը նշանակում է «ամրոց», իսկ «s(a)-a-wi» բառը Ջ.Քլեյնը ստուգաբանում է ուրարտերենի լեզվահիմքով՝ որպես «կառավարիչ»՝ թեև ուրարտերենում նման բառ ինչպես հատուկ անունների, այնպես էլ հասարակ անունների շարքում չի հիշատակվել: Սակայն հակառակ Ջ.Քլեյնի, Եկեղյաց (Ակիլիսենե) գավառը, ուր գտնվել է Ոսկե-բլուրը կամ Ալթին-թեփեն, ինչպես ընդգծվեց վերևում, ըստ Ստրաբոնին հասած ավանդության, եղել է արմենների կամ հայերի բնօրրաններից մեկը դեռևս մ.թ.ա. XIII դարում: Ուստի Ոսկե-բլուրի կամ Ալթին-թեփեի արձանագրությունները գրվել են ոչ խեթերենով, ինչպես ենթադրել են Ռ. Բարնետտը, Գյոզեն²⁶ և Ֆ. Շտեյնգերը²⁷, և ոչ էլ ուրարտերենով, ինչպես կարծել

²⁶ *Barnett R.D.* and *Gokce N.*, *Anatolian Studies* III, Ankara, 1953, p.124, table XVI (2,4).

²⁷ *Steinherr F.*, *Gie urartaischen Bronzen von Altintepe*, *Anatolia* III, Ankara, 1958, S.97-102.

են Ջ. Քլեյնը և Ի.Դյակոնովը²⁸, այլ հայերենով, և, բնականաբար, s(a)-a-wi բառը պետք է ստուգաբանել հայերենի լեզվահիմքով: Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ ենթատեքստում s(a)-a-wi բառը ցույց է տալիս արձանագրությունում հիշատակված ամրոցի (E.GAL) որպիսությունը՝ նրա պարիսպների բարձրությունը, ցածրությունը, ամրության աստիճանը կամ նրա արտաքին տեսքը (խոսքը պատերի դրսի գույնի մասին է) և այլն: Մեր կարծիքով, տվյալ ենթատեքստում «s(a)-a-wi» բառը ցույց է տալիս ամրոցի գույնը (դրսի սվադի, շարված քարերի գույնը), որպիսի օրինակ հայերի մոտ տարածված է եղել (օրինակ՝ Սպիտակ եկեղեցի, Սև եկեղեցի, Կապույտ ամրոց, Կարմրավոր եկեղեցի և այլն): Հավանաբար, տվյալ ենթատեքստում «s(a)-a-wi» բառը ցույց է տալիս ամրոցի սև լինելը, նամանավանդ որ այն իր «sw» բաղաձայնական արմատով հիշեցնում է հայերենի «սև» բառը, և ամբողջ տեքստը թարգմանվում է. «Սև ամրոցին 2 թուրուզա»: Այս փաստը ցույց է տալիս, որ Եկեղյաց (Ակիլիսենե) գավառի բնակիչները եղել են արմենները կամ հայերը ոչ միայն մ.թ.ա. XIII դարում, ինչպես հաղորդում է Ստրաբոնին հասած ավանդությունը, այլև ուրարտական դարաշրջանում, երբ գրվել են Ոսկե-բլուրի կամ Ալթին-թեփեի հիերոգլիֆիկ արձանագրությունները:

Հակառակ Գ. Մելիքիշվիլու²⁹ կարծիքի, Դայանի-Դիաուխի անունը կապ չունի մ.թ.ա. V դ. վերջում քաղաքական ասպարեզ եկած³⁰ և դրանից անմիջապես հետո այդ ասպարեզից ընդմիջտ անհետացած ու նույնիսկ մ.թ.ա. I դ. չհասած³¹ Հյուսիսային Կովկասից Ռիոն գետի հյուսիսային ավազան թափանցած տառիներ (taoxoi)ցեղի անվան հետ (տառիները տարբեր են խաոյներ (xaoi)ցեղից), որոնք մ.թ.ա. I դարում են թափանցել Ռիոն գետի հյուսիսային ավազանում. նրանց անվան հետ նույնպես կապ չունի դեռևս մ.թ.ա. XIII դարում Հայկական լեռնաշխարհում հայտնի Դայանի-Դիաուխի անունը):

Երբ Դայանի-Դիաուխին նվաճվում է ուրարտական պետության կողմից, նրա հսկայական հայ բնակչությունը մտնում է այդ պետության բնակչության կազմի մեջ, այնտեղ խիստ մեծանում է հայկական տարրը: Այդ է պատճառը, որ իր անկման փուլում (մ.թ.ա. 522թ.) այդ պետությունը արդեն քաղաքական ասպարեզում կոչվում է ինչպես Ուրարտու (Ուրաշտու), այնպես էլ Արմենիա (Արմինա) անուններով: Հետագայում, երբ փոքրաքանակ ուրարտները ձուլվում են մեծաքանակ արմեններին կամ հայերին, Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 331-330թթ. նոր առաջացած պետությունը կոչվում է Մեծ Հայք կամ Մեծ Արմենիա անունով (արդեն անկում էր ապրել երկրի Ուրարտու անունը. այն Արարատ կամ Այրարատ ձևով պահպանվել էր նոր պետության միայն մի նահանգի վրա): Ինչ

²⁸ *Дьяконов И.М., Замечания к урартским иероглифическим надписям из Алтынтепе (Древний Восток, III, Е., 1978, с.150-152).*

²⁹ *Меликишвили Г.А., Дияухи (ВДИ, 1950, N 4, с. 26-42).*

³⁰ Քսենոփոն, Սնաբասիս, Ե., 1970, գիրք IV §4 (14), §6 (4), §7(1):

³¹ Դիոդորոս, Միկիլիացի, Պատմական գրադարան, Ե., 1985, գիրք XIV §29 (1):

վերաբերում է Դայաենի-Դիաուխի պետության անվանը, ապա այն Տայք ձևով էր պահպանվել նոր պետության միայն մի նահանգի վրա:

Այսպիսով, Դայաենի-Դիաուխի պետությունը քաղաքական ասպարեզում եղել է շուրջ մ.թ.ա. 1260 թվականից մինչև մ.թ.ա. 522 թվականը, այսինքն՝ գոյատևել է 738 տարի: Ուրարտացիները, հաշվի առնելով Դայաենի-Դիաուխի պետության ընդարձակ տարածքը, մարզերի, ամրոցների, քաղաքների բազմաքանակությունը, մեծ զորքը և զարգացած տնտեսությունը, այն համարել են հզոր պետություն (KUR tarae), այսինքն՝ հինարևելյան հզոր պետություններից մեկը: Նրա լեզուն ունեցել է հայկական ծագում, այսինքն՝ նրա բնակիչները եղել են հայալեզու ցեղեր, այն է՝ արմեններ կամ հայեր: Այս հանգամանքը հիմք է տալիս ասելու, որ Դայաենի-Դիաուխի կոչվող հինարևելյան հզոր պետությունն ունեցել է հայկական ծագում և եղել է հայկական առաջին հզոր պետությունը:

ТЕРРИТОРИЯ ГОСУДАРСТВА ДАЙАЕНИ–ДИАУХИ И АРМЯНСКОЕ ПРОИСХОЖДЕНИЕ ЕГО НАСЕЛЕНИЯ

САРКИСЯН Д. Н.

Резюме

Государство Дайаени-Диаухи существовало начиная приблизительно с 1260 года до н.э. до 522 года до н.э., т.е. просуществовало на политической арене около 738 лет. Урарты считали его могущественным государством (KUR tarae), т.е. оно было одним из могущественных древневосточных государств. Его население составляли армяноязычные племена-армяне или хайи, а язык был армянским, что позволяет говорить о том, что древневосточное могущественное государство Дайаени-Диаухи имело армянское происхождение и что оно является первым армянским могущественным государством.